Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ, վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ՝ Գ. Անանյան

ԵՐԿԻՐ/ՔԱՂԱՔ/ԺԱՄԿԵՏ

Հունգարիա /Բուդապեշտ /, /27 -29 մայիս 2019թ./

ՆՊԱՏԱԿԸ

Գյուղացիական տնտեսությունների ռեգիստրի ձևավորման և արդիականացման ու գյուղատնտեսության կառուցվածքային հետազոտությունների կազմակերպման և անց-կացման Հունգարիայի կենտրոնական վիճակագրական գրասենյակի փորձի ուսումնասիրում:

ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Հանդիպման շրջանակում հիմնականում քննարկվել են հետևյալ թեմաները.

- Հունգարիայի գյուղատնտեսության ոլորտի վիճակագրության համակարգը.
- Հունգարիայի գյուղացիական տնտեսությունների ռեգիստրի ձևավորման և դրա արդիականացման համակարգը,
- գյուղացիական տնտեսությունների ռեգիստրի հիման վրա իրականացվող կառուցվածքային հետազոտությունների գործող համակարգը (տվյալների հավաքում, օգտագործվող ծրագրային ապահովում, մշակում և այլն),
- ԵՄ անդամ-երկրներում գործող կառուցվածքային հետազոտությունները կարգավորող իրավական հիմքերը,
- վարչական ռեգիստրների տվյալների բազաները և դրանց միավորման ընթացակարգերն ու խնդիրները՝ ընթացիկ վիճակագրության համակարգի ցուցանիշների ամբողջականության ապահովման նպատակով,
- կառուցվածքային հետազոտությունների ընթացքում չհավաքվող տվյալների տեղադրման (իմպուտացիա) և դրանց մշակման մեթոդաբանությունը,
- գյուղատնտեսության ոլորտում կիրառվող ընտրանքային հետազոտությունների մեթոդաբանությունը և գործիքակազմը:

Մասնակիցներին ներկայացվեց.

-Հունգարիայի գյուղատնտեսության վիճակագրական վարչության կառուցվածքը և գործառույթները: Վարչությանը բաղկացած է 66 աշխատակիցներից, որոնք զբաղվում են գյուղատնտեսության ոլորտի, անտառային տնտեսության, գյուղատնտեսական արտադրանքի գների վերաբերյալ տվյալների հավաքմամբ և մշակմամբ, գյուղատնտեսության հաշիվների կազմամբ և այլն:

-Գյուղացիական տնտեսությունների կառուցվածքային հետազոտության առկա համակարգը (տվյալների հավաքում, օգտագործվող ծրագրային ապահովում, մշակում, վարչական տվյալների օգտագործում): Հունգարիայում կառուցվածքային հետազոտությունների ընտրանքը իրականացվում է ստրատաների և կլաստերների ձևավորման միջոցով, աշխարհագրական տեսանկյունից բոլոր տարածքային ռեգիոնների ընդգրկմամբ:

-ԵՄ անդամ-երկրներում կառուցվածքային հետազոտությունները կարգավորող իրավական նորմը՝ Կարգավորում 2018/1091 գյուղացիական տնտեսությունների ինտեգրացված վիճակագրության վերաբերյալ: Վերջին փոփոխությունները վերաբերում են ֆերմերային տնտեսություն հասկացության չափորոշիչների արդիականացմանը:

-Հունգարիայում 2020 թվականին նախատեսվող գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման, իրականացման մեթոդաբանության առանձնահատկությունների և դրա արդյունքներով գյուղացիական տնտեսությունների նոր ռեգիստրի ձևավորման մոտեցումները:

-Գյուղատնտեսությանը վերաբերող վարչական ռեգիստրների տվյալների բազաները և դրանց միավորման ընթացակարգերն ու խնդիրները՝ ընթացիկ վիճակագրության համակարգի ցուցանիշների ամբողջականությունն ապահովելու նպատակով: Հունգարիայում ներկայումս ձևավորված և գործող մի շարք վարչական ռեգիստրներում շատ է կարևորվում դրանցում ընդգրկված ֆերմերային տնտեսությունների իդենտիֆիկացման (նույնականացման) ծածկագրերի առկայությունը, որը հնարավորություն է ընձեռում համեմատել տվյալները և համադրել առկա գյուղատնտեսական վիճակագրական ռեգիստրների հետ:

-Հունգարիայում 2020 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառմանը նախորդող փորձնական հաշվառման արդյունքները: Մասնավորապես, սույն թվականի փետրվար ամսին իրականացվել է հարցաթերթի դաշտային և կազմակերպական բնույթի աշխատանքների փորձարկում:

-Հետազոտությունների ընթացքում չհավաքվող՝ բացակա, տվյալների տեղադրման (իմպուտացիա) և հավաքված տվյալների վալիդացիայի մեթոդաբանությունը: Սկսած 2016 թվականից Եվրոստատը ԵՄ անդամ-երկրների համար մշակել է տվյալների ստուգաճշտման համակարգ, որն իրենից ներկայացնում է տվյալների թվաբանական, տրամաբանական և խաչաձև ստուգման գործիք:

-Տվյալների հրապարակման համակարգը, որն իրականացվում է միայն էլեկտրոնային տարբերակով: Այն հնարավորություն է տալիս սպառողին ինտերակտիվ եղանակով ստանալ ցանկացած խմբավորումով տվյալներ:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Աշխատանքային այցելությունը հնարավորություն ընձեռեց ծանոթանալ գյուղացիական տնտեսությունների ռեգիստրի վարման, տվյալների բազաների արդիականացման, գյուղացիական տնտեսությունների կառուցվածքային հետազոտությունների իրականացման հարցաթերթի և դրա լրացման հրահանգի,

գյուղատնտեսության ոլորտում գործող ընտրանքային դիտարկման գործիքների, ընտրանքային համակցության դաշտի և դրա ձևավորման սկզբունքների (ընտրանքի մեթոդաբանությունը, հարցաթերթերում ընդգրկված ցուցանիշների ցանկը, տվյալների հավաքման մեթոդաբանությունը, հավաքված տվյալների տարածումը գլխավոր համակցության վրա և այլն) և գործող գյուղատնտեսության ոլորտի վիճակագրական համակարգի, ինչպես Հունգարիայի, այնպես էլ ԵՄ անդամ- երկրների փորձին, դրանք ՀՀ-ում կիրառելու հեռանկարով, հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները:

ՆՇՈՒՄՆԵՐ

Այցելության հետ կապված բոլոր ծախսերը ֆինանսավորվել էր Համաշխարհային բանկի «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» TFOA4543 դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ,
վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ Գ. Անանյան